



ԲԱԺԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 Պուշկարիոյ համար  
 Տարեկան 10 ձր.  
 Վեցամսեայ 5 »  
 Արտասահմանի հա-  
 մար տարեկան 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃՌՆԵԼԻ  
 —)(—  
 Գրաքննիչ և ՏՆՆՏՐՈՐ  
 —)(—  
 Դրամուցման տոյր 20 սակ-  
 րիս է. երեքին աւելի աւել-  
 ցումներու համար 20 ՕԼՈ  
 գեղը կը լինայ :

# ՇԱՆՏՈՒՄ

R. P. Kalkmariam  
 (Austria) Me litharistangasse W. 4  
 Vienne

Նամակ եւ դրամ դրկել  
 Խնդրագրութեան հասցիին  
 —  
 Редакция на ввстпннъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoun»  
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՆԱՆԱՏՈՒ 3. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

### ԻՆՔՆԱԽԱԲՈՒԹԻՒՆ

—)(—  
 Մնաս բարով իմ հօր վարակ  
 կերպով եւ էլ իսրիպուրակ  
 Անսն սեւեւն օր մ'եղ կուզով  
 Ձեռքիս միտղ մը ազատութեան  
 ԽեջՅՈ

Բանաստեղծութիւնը, մանա-  
 ւանդ ժողովուրդականը, ամբո-  
 խի մը ինչեւ ուն և ձգտումներուն  
 ամենէն պայծառ ցոլացումն է :  
 Այդուր իր անշուք քնարին ձայ-  
 նով այդ ձգտումներուն հաւա-  
 տարիմ արձագանգը կը գառնայ :  
 Թանգերքի մը, տուն մը ոտանա-  
 տրի առջեւ պահ մը ուշագիտ  
 կանգ առնելով, շատ անգամ ա-  
 լելի դիտութեամբ կը թափան-  
 ցենք ժողովրդի մը նկարագրին՝  
 քան անոր կեանքին ամբողջ  
 պատմութիւնը պարզելով :

Այս տեսակէտով, ԽեջՅի վե-  
 րելի տողերը աննշմարելի չեն  
 կրնար անցնիլ. որովհետեւ ա-  
 նոնք որոշ և մեկին կերպով կը  
 ցոյցեն, թէ մեր հայաստան-  
 ցիները իրենց հայրենիքը փր-  
 կելու համար ի՛նչ ձախող գը-  
 րութեան մը հետեւած են մեր  
 թաղաւորութեան կործանումէն  
 ի վեր և անկէջ ալ առաջ :

Մեր ընթերցողները կը յիշեն  
 թերեւս վերելի ոտանաւորին  
 ամբողջութիւնը զոր հրատարա-  
 կեցինք անցեալ համարով :

Հայաստանցի մըն է, որ  
 կեանքէն աւելի կը սիրէ իր հօր  
 վաթաւը, իր սուրբ օրրանը. հօ-  
 զի կուտայ հայրենիքի սարե-  
 բուն, ձորերուն, որոնց վրայ  
 բուսած խոտերն անգամ նուիրա-  
 կան են իրան համար... Գիտէ  
 թէ թշնամին գիշեր ցերեկ այդ  
 սիրելի վաթաւը աւերելու վրայ  
 է, հրդեհելու, մրկելու վրայ է :  
 և կը զգայ թէ իր պարտքն է մի-  
 ջոցներ ձեռք առնել աւերումի  
 այդ կատաղի և անգագրում յա-  
 բառելութիւնը կատեցնելու,  
 սփոփելու, փրկելու : Աւստի ինչ  
 ընէ, ինչ ընէ, բլրի մը վրա-  
 յէն տխուր ակնարկ մը կը նետէ  
 հայրենիքի աւերակ համայնա-  
 պատկերին վրայ, և, ամէն բան  
 «թուրքին բերանը» թողով,

ողբագին վերջին մնաս բարով մը  
 կարճակէ ու... կառնէ կը քա-  
 լէ, միտքը գնելով սակայն քիչ  
 աւենէն վերագառնալ, այս ան-  
 գամ ազատութեան ճիւղ մը բռն-  
 նած ձեռքը...  
 Ահա այս սարսափելի ինքնա-  
 խարութեան մէջ փնտռեցէք մեր  
 ամբողջ դժբախտութեանց գաղտ-  
 նիքը : Ջարդերու, ձախողումը-  
 ներու, անյայտութեանց, ամէն  
 տուռապանքի բանալին այդ տեղն  
 է :

Բայց, մտ'ող աստուծոյ, ո՛ւր  
 կերթաս ամէն բան երեսի վրայ  
 թողած : Ո՛ւսկէց պիտի բերես  
 ազատութիւնը քու հայրենիքիդ :  
 Պոլսոյ մաքսատունէն, Գանուլի  
 նաւահանգիստներէն թէ Կոնստան-  
 տուլի գործարաններէն : Ո՛վ խաբեց  
 քեզի, հայաստանցի, ո՛վ ըսաւ  
 որ հայրենիքի ազատութիւնը  
 զայն երեսի վրայ թողով է որ  
 կը ստացուի :

Երբ որ կրէտացիները որոշում  
 տուին իրենց հայրենիքը փրկե-  
 լու, իրենց առաջին գործը փախ-  
 չիլ հեռանալը եղաւ : Եթէ ազա-  
 տութեան ճիւղը անոնք ալ ձեզ  
 պէս օտար երկրներու մէջ փր-  
 քուելու տխմարութենէն բռն-  
 նուած ըլլային, ու կըզին թա-  
 փուր ձգէին թուրքին բերանը,  
 ողբամիլի մնաս բարով մը թոթո-  
 վելով, ինչպէս դուք կընէք ձեր  
 հայրենիքին, կը կարծէք որ  
 այսօր իրենց ազգային իշխանը  
 ընդունելու, և «պիթօ» կեանդա-  
 զին ազգականերով երկիրք թըն-  
 դացելու հոյակապ երջանկու-  
 թեան արժանանային... :

Ո՛ւր տեսնուած է ասիկա : Մեր  
 գիտացածը, ամբողջ աշխարհի  
 պիտացածը սա է թէ երբ երկրի  
 մը մէջ ազատութեան կուսին  
 փողը կը հնչէ, ո՛չ միայն հոն  
 գտնուողները կը մնան անթիթ  
 ու անվեհեր, այլ և հեռաւոր  
 եղբայրներն ալ գունդագունդ կը  
 վազեն իրենց պարտքը կատա-  
 րելու : Անյայլի և բնական օ-  
 էնքն է ասիկայ, որ բացառու-  
 թիւն չի վերցնիր և որմէ դուրս  
 ամէն բան կեղծիք, պոստալու-  
 սութիւն և ինքնախարութիւն է :  
 78ի պատերազմի առնն, ուս-

բանակին սպարապետ մեծ-դուք-  
 սին կամաւորներուն բանակը  
 ստուարացնելու համար Բլոէշտ  
 սլացող պուլկար կամաւորներն  
 են որ իրաւունք ունէին Պուլ-  
 կարիային մնաս բարով ըսած ա-  
 տեննին յարելու  
 Անսն սեւեւն օր մ'եղ կուզով  
 Ձեռքիս միտղ մը ազատութեան  
 Մինչդեռ գրաստի կեանք վա-  
 լող, թշուառ, արտաւորող, այ-  
 լասերող մեր իտրիպները նոյն  
 գրութեան մէջ չեն և երբեք այդ  
 համբաւաւոր ճիւղը երազելու ի-  
 բաւունքը չունին :

Ձէ, սիրելի հայաստանցիներ,  
 այդ կարգի վնասակար երգերով  
 մի օրորուիք, մի՛ խաբէք ինք-  
 ցիներէն : փոխեցէք հայրենիքէ  
 դուրս աջատութիւն գտնելու դը-  
 րութիւնը, որ ձեր ազէտալինը-  
 շանաբանը եղած է միշտ : Գիտ-  
 ցէք որ Հայաստանէն դուրս,  
 ձեր ամբողջ արժէքը կորնցու-  
 ցած էք. և ինչ որ կը քաշէք  
 դուք և ձերինները, ինչ որ կը  
 քաշենք մենք ամէնքնիս, այդ  
 սկզբնական մեղքին՝ հայրենիքէ  
 հեռանալու յանցանքին հետե-  
 ւանքն է, զոր պէտք է դարմա-  
 նենք ա՛լ չի հեռանալով անկէջ,  
 միշտ հոն վերագառնալով : Մա-  
 հու և կեանքի օրեր են ասոնք :  
 հայրութեան վերջնական ճակա-  
 տագիրն է որ կը վճռուի, և մեր  
 ամենուս անխախտ յոյսը ա՛յն է  
 թէ վճիռը՝ արդարութեան յաղ-  
 թանակը, մեր յաղթանակը պի-  
 տի ըլլայ. և մեր այդ յոյսը հիմ-  
 նուած է միմիայն Հայաստանի  
 հայուն տոկունութեան և ազգա-  
 սիրտութեան վրայ, անոր՝ որ չէ  
 հեռացած անկէջ, կամ գէթ՝ կը  
 փութայ վերագառնալ հոն. ս-  
 րովհետեւ քաջ համոզուած ենք  
 որ ազատութեան ճիւղ մը դուր-  
 քէն չի բերուի, այլ երկրին  
 մէջ կ'աճի, կուրծանայ :  
 ՊԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ  
 Ն. Ա. Մ. Ա. Կ. Ա. Տ. Ո. Ք.

Կը ծանուցանենք Պուրքեշի մեր  
 արդոյ բաժանորդներուն թէ Տ. Ար-  
 մենակ Պարակեան յօժարած է ստանա-  
 նել թերթիս գործակալութիւնը նոյն  
 քաղաքին համար :

ԷԼԷԳԻԱ  
 (Ազգայնականութիւն իրիսօ Բոսնից)  
 Ասա՛ ինձ ժողովուրդ, ո՛վ է քեզ  
 օրորում ստրկական օրորոցում. նա՛  
 որ գաղանարար ծակեց փրկչի կուր-  
 թէ նա՛ որ դարերով քեզ երգում է  
 «համբերիք» հողից կը փրկվի...  
 Գուցէ նրա փոխանորդը—Լոյսոյլայի  
 որդին կամ Յուզափ եղբայրը, իսկա-  
 կան դաւաճան, ժողովրդային նոր  
 տանջանքների կենդանի լրաբերը :  
 մի նոր աւազակ, խենթ, որ ծախել  
 է հարազատ եղբորը եւ սպանել  
 հօրը...  
 Ժողովուրդը լուսմ է... խուլ և  
 անտիկ կերպով շոնդում են նրա շրգ-  
 թաները... ազատութիւն չէ լսվում  
 նրանից : նա մտայ է եւ իր գիտովը  
 ցոյց է տալիս «ընտրեալ» ցեղերին,  
 որոնք, թէ սերդուկով եւ թէ վեղա-  
 րով, անասունների անզգայ փաբախ  
 են կապուած : Ժողովուրդը գիտով  
 ցոյց է տալիս սրանց, եւ իր ճակա-  
 սից հոսում է արիւնախառն քրտին-  
 քը, խաչը խրվել է մտի մէջ, ժանդը  
 ուտում է ոսկրները. մակարոնները  
 ծծում են նրա կենսական հիւթերը...  
 Այո, խեղճ սարուկը «համբերում»  
 եւ հեծում է. իսկ մենք, առանց ա-  
 մաշելու, առանց խղճահարվելու  
 միայն հաշուում ենք. թէ քանի՞ դար է  
 ինչ մեր վզին լուծ կայ եւ ժողո-  
 վրդի ոտքերին չլթայ...  
 ՎԱՐՊՈ  
 ՕՐԸ ՕՐԻՆ  
 Պ. ԱՆՏՈՆԱԲԻ ԵՐԼՄԻՐԻ  
 Մենք որ վարժուած ենք, Բուսա-  
 նահայերը ընդանրապէս անտարբեր  
 նկատելու հայրութեան վերաբերեալ  
 խնդիրներու մէջ, հաճոյալի անա-  
 կընկալի մը ապաւորութիւնը կը  
 կրննք տեսնելով Պ. Անտոնաքի եօ-  
 նկաբուն, որ մատաղ հասակէն շիւ-  
 եալ իր ամբողջ կեանքը եւ ինչքը  
 յատկացուցած է հայրութեան կենսա-  
 կան մէկ մասին՝ ընդունի մշակման :  
 Գաղաքիս հեռաւոր թաղերուն մէջ  
 կը բնակի այժմ, մենակեացի կեան-  
 քով, իրեն ընկեր ունենալով վիթ-  
 խարի գրքեր, մանաւանդ ամէն չափէ  
 ու հասակէ բառարաններ. զորս մե-  
 ծամեմ զոնորութիւններով աշխարհիս  
 չորս կողմերէն բերել սուսած է :  
 Միջնահասակ, 50—55 տարեկան  
 անձ մըն է, յոգնած աչքերով. աղ-  
 խառն մազերով ու մօրուքով : Ընդ-  
 հանուր յոգնածութիւնը կը նշմար-  
 ուի նաեւ իր ամբողջ անձին վրայ,  
 ինչ որ սակայն արգելք մը չէ որ ա-

—)(—

մէն ատենէ ա ելի նուիրուի իր սիրական աշխատութեան, որ կարծես իր կեանքին անհրաժեշտ մէկ պէտքը դարձած է այլ եւս :

Պ. Եօնէսքուն բոլորովին անծանօթ մը չէ մեր հրապարակին. ասկէց տանեւէինք տարի ասով լատինական սառերով եւ հայ լեզուով Յոյս անուն թերթ մը հրատարակած է. զլիաւոր նպատակ ունենալով մերոսկան ստորեր լատինական ստորերով փոխանակել : Մինչեւ այսօր չէ հրատարակած այդ ծրագրէն եւ կը հաւատանք թէ հինգ տարի շանցած այդ գրութիւնը պիտի ընդհանրանայ եւ ազգին համար մեծամեծ օգուտներ պիտի արտադրէ եղեր :

Հիմակուհիմայ. Պ. Անտոնաքին մեծ սէր կը ցուցնէ հայ լեզուի վրայ. զոր բաւական գիւրութեամբ կը խօսի : Հաստատապէս համոզուած է թէ հայերէնը մայր լեզու մըն է. արմատական լեզու է. եւ եթէ չեմ սխալիւր, ճիշդ այդ բանը ապացուցանելու համար է որ ձեռնարկած է արմատներու ստուար բառարան մը յօրինելու գործին, որուն կաշխատի երկար ատենէ ի վեր եւ որ սակաւին բաւական տարիներ պիտի զբաղեցնէ զինքը :

Այցելած է Պոլիս. Վենետիկ եւ ուրիշ կեդրոններ, իր ապագայ երկին նիւթերը հաւաքելու, եւ այժմ վառնա հաստատուելով այս քաղաքին կը վերապահէ իր գոգին մէջ այսքան օգտակար մատեն մը ծնելու փառքը : Թրքական խստութիւնները թոյլ չեն տուած իրեն հաստատուելու Պոլիս, որ, ի հարկ է, աւելի յարմար միջավայր մըն էր այդ կարգի աշխատութեանց :

Կարճատեւ այցելութիւնս չէր ներէր որ Պ. Եօնէսքուն ծրագրերուն աւելի խորքերը թափանցեմ. ուստի առ այժմ կը բաւականամ այս քանի մը հարեւանցի սողորով, կատարեալ յաջողութիւն մազթիւրով մեր բուսականայ ազգակցին ձեռնարկած այս ստուար աշխատութեան :

Գ. Ա.

Մեր կամքէն անկախ պատճառներով Շարժումի նախորդ համարը անհնարին եղաւ իր ժամանակին հասցնել :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (5)

ՀԱՏԻ ԳԻՆ

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷ

Ժ.

Ուրիշ շատ մը բաներու պէս, մարդասիրական զգացումն ալ ալ չի մար միշտ իր նախկին բարձրութեանը վրայ, եւ չի պահել իր սովորած թիւնը : Ուրիշն զարմանալի եւ տարօրինակ թող չի թուի. երբ գաղթականութեան վրայէն ալ նուազեցան խնամքներն ու գաղբեցան նպատակներն :

Հայկական սարսափներու ստաջին սպաւորութեան սակ յոյզուած մարդկութիւնը պոսաց, կանչու բռանց եւ իր լուսնն նկատեց. բայց սա մարդասիրական երեւոյթը հիմնական տեւական բան մը չընէր իր մէջը. փայլակի մը պէս վայրկեան մը խաւար անդունդներու վրայ իր լոյսը շողացուց ու մտրեցաւ. շոգեմալի մը հանած ալեկոծութեան պէս պահ մը

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ. Պոլիս, 10 Դեկտ.

Կեղծ Այցելու Հովիւր պաշտօնապէս խայտառկուած. — Ղայրիքի տէրը. — Մակեթոնիա արշաւող հայր :

Խեղճ Արսէն վարդապետ ամէն օր նոր հարուածներ կը ստանայ որոնցմէ չեն կրնար ազատել զինքը ո՛չ անօթիներու խումբը, ո՛չ թրքամուղի շահն, ոչ անօթի խառնակիչը և ոչ ալ ազգին գրամները շորթող ջոջ ազաները : Օրմանեան Պատրիարք պաշտօնական նամակով կը գրէ Թաղթորհուրդին թէ Արսէն վարդապետ շատոնց գիտէր իր պաշտօնականութիւնը Վեհափառին կողմէ, թէ Պուլկարիոյ Առաջնորդի խնդիրը նկատուած թեան առնուած է և պիտի լուծուի քիչ ատենէն, թէ Պուլկարիոյ բոլոր պաշտօնական մարմինները պէտք է յարաբերութիւն հաստատեն ուղղակի Պատրիարքարանի հետ, թէ այս բովանդակութեամբ նամակներ գրուած են Պուլկարիոյ բոլոր Թաղթորհուրդներուն : Չենք զլուր թէ «պաշտօնապետ Արսէն վարդապետի համար պատրաստուած հանրագիրները պիտի զրկուին Պատրիարքարան : Թո՛ղ Արսէն վարդապետ մէկ կողմ ձգէ առ այժմ կուսակցութիւն մը կազմելու ճիշդը, անօթի սուաքեալներու շահատ պաշտօնները գտնելու ջանքերը, և աշխատի միջոց մը գտնել ինչպէս փոսէն ազատելու համար : Ետտ հաւանական է թէ քիչ ատենէն Վեհափառ Հայրիկէն ալ փառաւոր դաս մը առնէ :

«Ղայրէթ» թուրք լրագրին տպարանին մէջ կաշխատէր Մամաս անուն հայ գրաշար մը, ու

փրփրալից ծփաց ու շուտով գտաւ իր վճիտ հանդարտութիւնը :

Թիբիս իրենց քանի մը լուսնները բաւական եղան ներսերին բարձրացող բողբոջի ձայնը իր զգելու, եւ թափած քանի մը կոկորդիլոսի արցունքներով իր կարծեցին լուսն հայուն վերքերը : Է՛հ, ա՛լ զարկերջը մաքրուեցաւ իր եզրքի արասներէն, եւ իրենք դարձան իրենց սովորական հաշիւներուն :

Գաղթական հայր նորէն ձգուեցաւ իր բազմին ու ալ թող աշխատէր ան, թող իր գլխուն ճարը նայէր : Բայց ո՛ւր եւ ինչպէ՛ս :

Ասի իրենց գիտնալիք բանը չէր, եւ ետ կանչեցին իրենց առաքելները ու առաքելութիւնները :

Պատրիարքին առջ թերեւս մեր զգացումներն ալ իրենց սեղատուութեամբը գարբակեցին ու ցրացուցին գաղթականներուն ապրած միջավայրը : Երկէ գաղթականը կը շըկտաւին ազգային զո՛ւ մը, հայրենիքի սեղանին վրայ հանուած մեր հանրային թշնամիին կողմէն, եւ մեզի սրբազան աւագ պատրակաւորութիւն կը սեպկինք կիսել անոր արցունքն ու ցաւերը : Բայց օրեր

բուն ամսականները չը վճարելու համար ամէն միջոց գործածեց Ռիզա փաշա, «Ղայրէթ»-ի տէրը : Մամաս դատարանին դիմեց իր իրաւունքը ստանալու համար, բայց Ռիզա փաշա դատարանական ամէն նրբութիւններով օգտուելով յաջողեցաւ դատը երկարաձգել : Որովհետեւ գիտէր թէ Մամաս նիւթապէս կը նեղուէր, ապարանին գործակալները կառարկեն անոր Պոլիս երթալ և լրտեսութիւն ընել : Մինչեւ իսկ կը յանդգնին իսլամութեան հրաւիրել զայն : Ասոր վրայ Մամաս գայրացած դանակով կը վիրաւորէ տպարանին գործակալներէն մին և անյայտ կը լլայ : Միւս կողմէ Ռիզա փաշա արդարութեան յանձնուած է Պուլկարիոյ կառավարական գաղափարները Թուրքիոյ ծախած ըլլալու ամբաստանութեամբ : Կըսուի թէ իր ձեռագիր նամակները բռնուած են :

Իբրեքեք քամիներ առաջ, երկու մակեթոնացի պուլկարներ և մէկ փախտական հայ կը վորձեն զէնքով Մակեթոնիա անցնել և հոն կուրիլ թուրքերու հետ : Պուլկար զինուորական վարչութիւնը ձերբակալած էր զանոնք սահմանադրութիւն վրայ և բանտարկած : Այս շարժում տեսնուեցաւ ասոնց դատը զինուորական ատենին տուչեւ հրապարակով : Կէննատիէֆ նշանաւոր փաստաբանը և երկու ուրիշ փաստաբաններ կը պաշտպանէին ամբաստանեալները, որոնք յայտարարեցին թէ իրենց եղբայրներուն վրէժը լուծելու համար կանցնէին Մակեթոնիա : Ընդհանուր դատախաչը յայտարարեց թէ ասոնք յեղափոխականներ չեն, այլ պարզ շարա-

անցան. բնակացանք անոնց կըսկիծներուն, անոնց շարժարանքի պատմութիւնները ալ հասարակ խօսքի դարձան, եւ ալ անոնք ոչինչ տարբերութիւն չունեցան հասարակ գիտցի մտաբացիկներէն : Յոգնեցանք անոնց վրայ գուրգուրալն, սպառեցանք անոնց համար զոհողութիւն ընելէ. եւ սկսանք հազարու մէկ ծամածուծութիւններ ու արտուշներ, խտանել անոնց սուած հացերնուս հետ :

— Ախպար, թող գործ գտնեն, թող աշխատին, ի՞նչ ձեռքերին ծալած նստեր են :

— Բայց գործ չի կայ. ի՞նչպէս աշխատին :

— Է՛հ, ի՞նչ ընենք կ՛փէկնիմ. թող չի գային, մենք չը կանչեցինք ե՛ս, թող իրենք զիրենք պաշտպանէին :

Եղան ալ որ Ուրախուէն աւելի վսեմ գտնուեցան եւ շամչան աւելցնելու. — թող ստակէին :

Ահա այսպիսի խօսքեր եղան գամբանականները մեր ազգասիրական, մարդասիրական զգացումներուն : Իրաւ է թէ իրական թշուառու-

գործներ և իրենց նպարակն էր հարուստ թուրքերը կողոպտել, Հետեւապէս պահանջեց որ խնտուր պատժուին իբրեւ հասարակ շարագործներ : Փաստաբան կէննատիէֆ պաշտպանողական օքանչելի ճառով մը, որ ժամ մը տեւեց, պատպանեց զանոնք : Յայտարարեց թէ ասոնք գաղափարական մը համար կուրող վեհ հոգիներ են : Յիշեց Պոլիէֆը, Լէվոկին, Գարաճան և ուրիշ Պուլկար հայրենասէրներ, որք ժամանակին աւագակ անուանուեցան, բայց յետոյ անմահացան : Դրոստեց բոլոր յեղափոխականները որք ահագին զոհողութիւններով աշխարհը կը մաքրեն ազատ կառավարութիւններէ : Թափուած հազարաւոր հայերու աւրիւնը ազատեց կրէտէն և ո՛վ գիտէ թէ վաղը ուրիշ խնդիր մը պիտի չազատէ նաեւ Հայաստանը և Մակեթոնիան : Ի՞նչ գործ ունի այս հայը, ըսաւ, այս խումբին մէջ, եթէ ո՛չ հասարակաց թըշնամիին գէժ կուրիլ միեւնոյն գաղափարականն է համար : Եթէ ասոնք աւագակներ ըլլային, հարկ չը կար թուրքիայէն հեռանալով փախ զի հոն կրնային այդ արհեստը գործել փաշաներու հովանաւորութեան տակ : Փաստաբան կէննատիէֆ վերջացուց իր ճառը իր պաշտպանեալներուն արձակումը ինդրելով, վասն զի 1. մտադրութեան համար ո՛չ մի գատարան կրնայ դատապարտել մէկը և 2. վասն զի այս անձերը գաղափարական մը համար կուրղէին ո՛նցնիլ սահմանադրութիւն և հետեւապէս րոտաքական յանցաւորներ են : Միւս փաստաբաններն ալ իրենց պաշտպանողական ճառերը արտասանելէ յետոյ, դատարանը անպարտ արձակելով ամենքն ալ :

Երանի՛ թէ մեր հակայեղափո-

թիան հետ շատ անգամ կեղծիքն ալ եկաւ խառնուեցաւ. հասարակ գրոնհիկ աղտոտութիւններ գաղթականութեան այլազան խառնուրդէն զուր պոռկակներն ու մեզի պօզանգ գողեցին, բայց ասոնք երբեք իրաւունք չէին տար մեզի ամէնքը սա հասարակ մէկ ջուրով լուսու եւ երեսունն պոտալու :

— Դուք, գաղթականներդ մարդ չէք, ամչնալ չէք գիտեր :

Ու թող սուրինք որ ընդհանուր անզգայութեան եւ մոռացութեան մէջ մարին կածկլտող միտքերը, ժանգոտին գոհար սիրտերը :

Աւելի գէշերն ալ գտնուեցան, որոնք չը վարանեցան ազգասիրտ սուած հացն խոշոր պատառ մը բլրցնել իրենց փորը պարարտացնելու եւ թշուառութեան մատակարարած թոյլ ու մտրած էակներով իրենց կիրքերը յաղթուեն :

Չերկարելու համար զանց պիտի առնեմ սա կէսին վրայ, չի պիտի ծանրանամ ոս ազոաւներուն վրայ, որոնց համար ամէն զիակ ամէն կոյտ սնունդ կը մատակարարէ կը բաւականամ զէնք մը

խական ազաներէն մին ներկայ ըլլար և լսէր կէննատիէֆի այս ճառը . . .

ՊՈԼՍՈՑ ԿԵԱՆՔԸ

Կ. Պոլսէն կը գրեն .

Այստեղ լուր կը շրջի թէ Անատոլի նահանգներու քննիչ և հայկական ջարդերու կազմաւորուած Դաքիոյ փայտի վրայ սպաննութեան փորձ մը կատարուած է . փաշան չէ մեռած , միայն ծանր կերպով վերաբերուած է : Այս գործը հետզհետէ հաստատութիւն կը գտնայ : Սպանութեան հեղինակը հայ ըլլալ կը կարծուի , կըսուի նաեւ թէ իր գործը քաջաբար խոստովանած և յարած է որ եթէ հայկական գաւառներու արդի յուսահատական դրութիւնը յարստութիւն , չի կրնար առաջուրէն ճշդել թէ յուսահատութիւնը ինչն էր չը պիտի թեւագրէ վայրագ լուծի մը տակ ճնշուած դժբախտ ժողովուրդին : Սպանութեան այս փորձը մեծ յուզում առաջ բերեր է պալատին և Բ. Դրան մէջ :

Աստիկանութիւնը այն աստիճան իրարանցումի մէջ է , որ կարծես թէ մեծամեծ գէպքերու կրպակներ : Չերբակալութիւնները բաղմամբիւ են . բանտարկուածներուն մէջ ամէն սգոյց անհատներ կը գտնուին : Գործը կը հաւաքուեն թէ բանտարկուածներուն մէջ իսլամաւորը մանաւանդ զարգացեալ դասակարգը կարեւոր թիւ մը կը կազմէ և ապա . . . կանհետանայ առանց հետք իր ձգելու :

Մակեդոնական և կարծեցեալ բարենորոգումներու հարցը զիսկապիտուլեթեան օրակարգին մէջ է . այս պատճառաւ ծայ-

րայեղ ցառում մը կը տիրէ բարձր շրջանակներու մէջ և խոստովանութիւնները օրէ օր կը աստիճանաբար դժուար ժողովուրդ վերայ , որ իր թշուառութեան համար գանդատելու յանցանքը դործած է :

Չինորական պատրաստութիւնները տենդոտ գործունէութեան մը մէջ են : Մեծ քանակութեամբ ռազմավթերը զըրկուած է էպիրնէի և Մակեթոնիոյ զօրաբանակներուն :

«Պէրլինէր Թակէպլաթ» լրագրին Պոլսոյ թղթակիցը կը գըրէ :

Իսլամներու մէջ երեւցող խըլրտումները կը շեշտուին : Շէյխիւ իւլ իսլամը Սուլթանին յայտարարեց որ այլ ևս չէ կարող երաշխաւորել հոգեւորականներուն օրինական ընթացքին համար : Սօֆիաները խոսովութիւններ կը սերմանեն Խալիֆային դէմ , և լուր կը տարածեն թէ սուլթան Մուրատը թունաւորուած է : Այս պատճառով սուլթանը իր վստահութիւնը վերցուցած է Շէյխիւ իւլ իսլամին վրայէն , և միտք ունի պաշտօնի կոչել Բասանտիժա-Չատէ անուն մոլլան , որ ազգիցիկ անձ մըն է , քանի մը լեզուններու հմուտ և համբաւաւոր իր գերմանասիրութեամբ :

Ք Ր Ո Ն Ի Կ

Թիֆլիսի ստոիկանութիւնը սկսեր է ցուցադրել այն հայ գաղթականները , որոնք տակաւին ռուսական հողի վրայ կը գտնուին : Կառավարութեան տուած մէկ տարուան պայմանաւորութեամբ քանի մը ամէն կը լրանայ : Գաղթականները ճանապարհածախս պիտի ստանան , և եթէ հայրենիքի մէջ դժուարու-

թիւններու հանգիպին , ռուս հիւպատոսներու գիմելու իրաւունք պիտի ունենան : Եթէ վերագրածը խումբերով տեղի ունենայ , թուրք իշխանութիւնները իրենց վայրագութիւնները չի պիտի կրնան գործադրել : Խորհուրդ կուտանք մեր ամէն կողմերու պանդուխտներուն , հայրենիք վերգառնալու այս յարմար առիթէն օգտուելու :

—Օրմանեան պարտիարքը թէ պոլսոյ դեսպաններուն և թէ օտար երեւելի հեւերու հետ լաւ յարաբերութիւններ մշակելու սովորութիւնը կը պահէ : Վերջերս այցելած է Նիկոլա մեծ դուքսին և Ֆրանսայի նախկին նախարար պետ Պ. Լէոն Պուրժուաի որոնք փոխադարձ այցելութեան գացած են պարտիարքին :

Մօտերս պարտիարքանէն հրահանգ պիտի երթայ եգիպտոսի առաջնորդական ընտրութիւն կատարելու :

Մշակի կիմացներ թէ հայր Ղեւոնդ Ալիշան այժմ պատրաստ ունի քանի մը հեղինակութիւններ , ինչպէս են Հայաստանի աշխարհագրութեան քարտէզ , երկու ստուար հատորներ «Հայկական» անունով . բայց վեհատիկի Միսիթարեան վանքը յանձըն չառնելու տպագրութեան յանձնել պատկուտելի գիտնականին այս գործերը , նիւթական միջոցներէ զուրկ ( ? ) ըլլալուն համար :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

Կ Ր Է Տ Է

Այլ ևս թուրք սեւ բռնակալութիւնը տխուր յիշատակ մը , արիւնոտ գիծ մըն է Կրէտէի պատմութեան մէջ : Ազատութեան

արժանի այս ժողովուրդը իր սիրելի իշխանը ունենալու վարձատրութեան արժանացաւ :

Անցեալ հինգշաբթի առաւօտ Եօրկիոս իշխանը Սուտա հասաւ Ֆրանսական Պիւօ շոգեհանով : Ընդունելութիւնը հոյակապ եղաւ : Մովակալներուն ընկերակցութեամբ Բանէ գնաց , ուր կրօնական արարողութեան մը ետքը , ծովակալ Բօթիէ իրեն յանձնեց կղզիին կառավարութիւնը : Այն պահուս ինքնօրինութեան գոյրը կը բարձրանար պաշտօնատան վրայ , և մարտանաւերը թնդանօթի 21 հարուածները կարձակէին : Գաղաքը գոյակներով և ծաղիկներով զարդարուած էր . իշխանին ճամբուն վրայ , ամէն կողմ յաղթական կամարներ կառուցուած էին :

Իշխանը բանախօսութիւն մը արտասանելով խոստացաւ կղզին արդարութեամբ և անաչառութեամբ կառավարել : Յանձնարարեց որ քրիստոնեայ և իսլամ մոռնան իրենց անցեալի ատելութիւնները , և ըսաւ թէ երկրին զարգացումը ամենուն ալ աջակցութեան պէտք ունի : Իրիկունը , իշխանը կառքով պտոյտ մը ըրաւ Բանէի լուսազարդուած փողոցներուն մէջ : Ամբոխը անպատմելի ցնծութեան աղաղակներով կընդունէր զինքը : Իսլամները ևս մասնակից էին ընդհանուր ուրախութեանց :

Մովակալները իշխանին հասնելէն առաջ յայտարարութիւն մը ուղղած էին ժողովուրդին , սա իմաստով .

Կրէտացիներ , Եօրկիոս իշխանին ժամանումը նոր թուական մը պիտի բանայ ձեզ համար : Հերիք անհամաձայնութիւններ , եղբայրասպան և բարբարոս կռիւները : Չեր հայրենի հողը

միայն ներկայացնել անոնցմէ , որ անմիջական կապ ունի մեր պատմութեան հետ , եւ աս դէմքն է Մարկոս աղա :

ԺԱ.

Մարկոս աղան բնիկ Պուրցի մըն էր , եւ շատ կանուխէն եկած էր . . . քաղաքը , իր գիտցած քանի մը լեզուներով , ճարտիկ միտքովը եւ ճակատիկ ձեւերովը , շուտով կրցաւ բարձրանալ վեր իր գործակատարի վիճակէն և գիրք մը ստեղծել իրեն համար :

Մարկոս աղան հիմոյ կէ-ի մօտ . առեւտրական ընդարձակ տան մը տէրն էր , եւ քաղաքին հայ ազգաբնակչութեան ազդեցիկ ջոջերէն մէկն էր :

Առուստացած չէր . իր բազմասեւակ զբաղումներն , հարստանալու անյազ տենջր գեւ ստ քանին վրայ խորհելու ժամանակ չէին ձգած իրեն : Վերջին ծայր նախանձախնդիր էր գոնէ զուրքէն իր հարուստ մարդու անունին հետ բարի և պարկեշտ

մարդու համբաւն ալ կապել : Ուստի ամէն կիրակի առաւոյ իր հաստ փորը շարկած , կարճ ու գէր իրանը վերարկուին ծաղիկներուն մէջ ծրարած , և աչքերուն կրակոտ ցոլքերը ակնոցին տակ սքողած եկեղեցի կերթար :

Կրնկերանար քահանային անոր բոլոր մաղթանքներուն ու ազօթքներուն , խոստովանելու կը խոսնէր զպիտաներու երգերուն . եւ մէջէ մէջ ձեռքերը կը տարածէր ու կը պոսար .

—Մեղայ տէր : Բայց Մարկոս աղա սուրբ մը չէր , իր խոստովանութեամբ միշտ զգպի կիները կը քաշէին զինքը : Բայց ինք գիտէր կառավարել իր կիրքերը , եւ չէր թողուր որ անոնք իր առեւտրական գործերը խոսնալկեն և իր վերայ առած բարի մարդու պատանքը ծակկեն : Գոն կը ըլլար մը . . . մէջ գրամին իրեն մատակարարած վախիճներովը :

Շոտլ էր ան , երբ խնդրը ի ձայն փողոյ քարոզուելիք նուիրատուութեան մը կամ երգչուհիի մը գիրկ զգուանքները վայելելու վրայ ըլլար : Բայց վերջին ծայր չար ու խիստ էր հանդէպ իրեն պարագ ու-

նեցողներուն եւ ետ կը հրէր բոլոր ան ամչկոտ ձեռքերը , որոնք մութին մէջ իրեն կերկնային :

Ինքզինքը ազգային գործերու հմուտ և քաղաքական հարցերով հետաքրքրուող մը կը ներկայացնէր . բայց իրապէս , իր առուտուրէն , իր շահէն անդին չէր տեսներ : Ազգային յեղափոխական շարժումներուն մէջ օրը օրին փոխեց իր հաւատքը , օր մը թուեաւ Հնչակեան մը կը ըլլար եւ անոնց յաջողութիւնները կը ծափահարէր . ուրիշ օր մը կը սկսէր Դաշնակցական գործունէութիւնը փառաբանել և Հնչակեանները վարձարնել ըսելով :

—Չէ՛ր ըսեր որ անոնք բան մը ընելիք չունին :

Կըսուէր ազգային դարձեալ յաջող մէկ վայրկեանին , որպէսզի ինքզինքը նեակ առաջին կարգիներուն մէջ , եւ ինչ ալ լաւ ծրարներ ունէր , ապագայ աղա շայաստանին մէջ գործադրելիք :

Բայց ամենուն հետ իր այդ երազըն ալ չիրականացաւ : Եւ Պոլսոյ հետ ունեցած իր առեւտրական գործէն բաւական վնասուեցաւ : Ալ թուեալ պահպանողական դար-

ձած կը պոսար .

—Ա՛խ , աս բաղդախնդիրները ազգին տունը քանդեցին , գետինն անցնին ամէնքն ալ ըլլայ Հնչակեան , ըլլայ Դաշնակցական :

Ահա աս հարուստ , պարկեշտ և ազգասէր Մարկոս աղան էր որ իր Ատենապետ Աղքատախնամ վարչութեան , կօծանդակէր Անգլիացի օրիորդին , գաղթականները խնամուելու գործին մէջ :

Մարկոս աղա իր կեղծապարիշա ձեւերովը , ամբողջապէս գրաւեց օրիորդին վստահութիւնը , իր ձեռքով կը ըլլային բոլոր գնումները , աւելորդ է ըսել թէ յեղափոխութեան երեսէն տեսած վնասին քառապատիկը շահեցաւ գաղթականաց մատակարարութեանէն :

Ու երբ օրիորդը մեկնեցաւ , իր ունեցած գրամը եւ գողթականութիւնը յանձնեց Մարկոս աղային , որպէսզի պահ մըն ալ շարունակէ գործը :

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

(Շարունակելի)

արիւնով շաղախուեցաւ և դուր  
բաւական սուղ գնեցիք ազատ և  
ինքնօրէն կառավարութիւն մը  
ունենալու իրաւունքը: Հետո՛ւ  
ձեզմէ անցեալ օրերուն սեւ յի-  
շատակը և վստահ ապագային՝  
շանացէ՛ք արժանի ըլլալ այն  
բարեացակամութեան զոր ցոյց  
տուին ձեզ պետութիւնները:

— Ինչպիսիք կրօնաւորներուն պա-  
տուիրակութիւնը ընդունելէ ետ-  
քը, Եւրկիոս իշխանը Քանէի  
գլխաւոր մզկիթը այցելելու է,  
ցուցնել ուղելով թէ ինք՝ կրօ-  
նական խորութիւններու կուսա-  
կից չէ: Մզկիթին մէջ գտնուող  
800ի չափ թուրքերը ոտքի ելլե-  
լով, իշխանը ողջունել են:

— Ուրիշ միջադէպ մըն ալ շատ  
լաւ տպաւորութիւն թողել է ժո-  
ղովուրդին վրայ: Քանէի քաղա-  
քապետը, որ իսլամ մըն է, թեւը  
տուած իր քրիստոնեայ օգնակա-  
նին, ռուսական նուագածուաց  
խումբին ու ստուար ամբօխի մը  
ընկերակցութեամբ քաղաքին փո-  
ղոցներուն մէջ շրջան մը ըրել  
է, կերպով մը նուիրագործելով  
կրէտէի քրիստոնեայ և իսլամ  
տարբերուն եղբայրացումը:

— Կըսուի թէ թուրք կառավա-  
րութիւնը բողոքներ է Եւրկիոս իշ-  
խանի ընտրութեան դէմ և թէ՛  
ցնոր անօրինութիւն, բնաւ պաշ-  
տօնական յարարութեան մէջ  
չի պիտի մտնայ անոր հետ:

ՁԷՆԸՆԿԵՑՈՒԹԻՒՆ

Անգլիոյ «Բըվլու ռիվիուս»-ի  
անօրէնը, Պ. Սթէյս, բոլոր քա-  
ղաքակիրթ ազգերու կողմէ 70  
նշանաւոր ներկայացուցիչներու  
պատգամաւորութիւն մը պիտի  
կազմակերպէ որ Բեզերսպուրկ  
պիտի երթայ փետրուարին, զէ-  
նընկեցութեան դեսպանախոր-  
հուրդին գումարման միջոցին:  
Մ. Նահանգաց ներկայացուցիչ-  
ները Լոնտօն երթալով պիտի  
միանան չէզոք երկիրներու  
պատուիրակներուն և Բարիլի,  
Պէրլինի ու Վիէնայի մէջ մե-  
ծազորդ գումարումներ պիտի  
ունենան: Վերջապէս, եւրոպա-  
կան պատուիրակներուն հետ,  
Բեզերսպուրկ պիտի տանին աշ-  
խարհի կամքը: Այս է Պ. Սթէ-  
տի յատակագիծը: Ինչպէս յայտ-  
նի է Պ. Սթէտ վերջերս տեսակ-  
ցութիւն ունեցաւ Չարին հետ:

ԱՆԳԼԻԱ

Ազատական Պ. Ասքիթ Պըր-  
մինկէմի մէջ անցեալ ուրբաթ  
օր ճառ մը խօսած է որմէ կը  
քաղենք հետեւեալ կէտերը:  
Բաղդատեցէք ազատական կու-  
սակցութեան քաղաքականու-  
թիւնը այս վարանոտ քաղաքա-  
կանութեան հետ որ ուղածը չը  
գիտնալով, ձգձգումներ կընէ  
հաստատուն լուծում ուղող խըն-  
դիրներու մէջ և պատասխանա-  
տու է աշխարհի ամէն կէտեղուն

վրայ մեր դէմը ելած դժուարու-  
թեանց: Մենք ծայրայեղ ազ-  
գասէրներ չենք. կը մերժենք  
այն երկրակալութեան կեղծ քա-  
ղաքականութիւնը որ ամբողջ աշ-  
խարհը իրեն սեփականութիւն  
կը նկատէ: Երկու ազգեր կան  
որոնց հետ խիստ կարեւոր է որ  
բարեկամական յարաբերութիւն-  
ներ ունենանք, Թրանսա և Ռու-  
սիա:

Արեւմտեան քաղաքակրթու-  
թեան ամենէն մեծ թշնամիները  
անոնք են, որ մեր և ֆրանսա-  
ցիներուն միջև և թշնամութիւն  
կարծարծեն: Ազատիւն, քայր կըս-  
ուարարներէն: Ազատական կու-  
սակցութեան արտաքին քաղա-  
քականութիւնն է կորովի լեզու  
և վճռական գործ, և զերագոյն  
նպատակն է աշխարհի խաղաղու-  
թեան պահպանումը:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Պուլկարական կիսապաշտօնա-  
կան Միր լրագիրը խօսելով Մա-  
կեթոնիոյ մէջ բարենորոգումներ  
մտցնելու համար Թուրքիոյ ու-  
նեցած մտադրութեան վրայ, կը  
յարէ թէ Պուլկարիոյ մէջ համակ-  
րութեամբ ընդունուած է այդ  
որոշումը, միայն թէ բարենորո-  
գումները պէտք է կատարուին  
Պէրլինի դաշնագրին շարք յօդ-  
ուածին հիման վրայ, ինչպէս  
տեղի ունեցաւ կրէտէի մէջ:

— Պոլսոյ աւտորիական դես-  
պանը երկրորդ անգամ ըլլալով  
խորհուրդ տուեր է Դրան՝ Մակե-  
թոնիոյ մէջ բարենորոգումներ  
մտցնելու:

— Թուրք լրագրերը կատար-  
եալ լուրթիւն կը պահեն կալա-  
թարիսի ռուսական նորաշէն ե-  
կեղեցիին օժման պարագաներուն  
վրայ: Դրաքննութիւնը արգելած  
է նոյն իսկ օտար լեզուաւ հրա-  
տարակուած թերթերու յիշել թէ  
այդ հանդէպներուն ներկայ գրու-  
նուած են յոյն և պուլկար եկե-  
ղեցական պատգամաւորութիւն-  
ներ:

— Սուլթանը որ պահ մը տրա-  
մադրութիւն ցոյց տուած էր սեր-  
պերու պահանջումներուն գոհա-  
ցում տալու, հիմա բոլորովին  
վիտուած է: Պալատը՝ Սերպիա-  
կան գործերը Բ. Դրան վերա-  
գարձուց յայտարարելով թէ չու-  
զեր անոնցմով զբաղել, Սերպիոյ  
դեսպանը որ շատ դժգոհ է իրե-  
րու այս նոր դրութենէն, միտք  
ունի աւելի ազգու գիրք մը բըն-  
նել:

— «Թայմզ»-ի թղթակիցը կը  
գրէ թէ Սուլթանը Շէյխ-Իւլ-Իս-  
լամէն պահանջեր է որ կրէտէի  
յանձնումը վաւերացնող հրովար-  
տակ մը հանէ: Շէյխ-Իւլ-Իսլամը  
բացարձակապէս մերժել է այս  
պահանջումը, ըսելով թէ Սուլ-  
թանին ընթացքը երբեք չի կըր-  
նար արդարանալ, և յարել է:

«Կրնաք զիս պաշտօնանկ ընել,  
որովհետեւ չեմ ուզած գործիք-

դառնալ. բայց գիտցէք որ իւ-  
լէմաներու խորհուրդը ձեզի դէմ  
է և անկարող էր անոր վաստե-  
լու»:

— Ռուսական մամուլին մէկ  
վաղմի աշխատաւորը, Պ. Վա-  
լէնթինեանո, որ կարեւոր գէւր  
մը կատարած էր իր հայրենի-  
քին գժբախտութեան օրերուն,  
ծայրայեղ ազգաստութեան պատ-  
ճառով անձնասպան եղեր է  
Պուրէշի հիւանդանոցներէն մէ-  
կուն մէջ:

— Նախկին նախարար և ծերա-  
կոյտի անդամ Պ. Քոնսթան, Պոլ-  
սոյ ֆրանսական դեսպան պիտի  
անուանուի:

— Պոլսոյ մեր թղթակիցը կը  
գրէ թէ անցեալ ուրբաթ իրի-  
կուն, Բերայի մէջ սպանուել է  
Սուլթանին թիկապահներէն Ղա-  
նի պէյ, ալպանեացի մը, որ  
մեծ հուշակ հանած է իր շարա-  
գործութիւններով:

Յաջորդ համարով պիտի հը-  
րատարակենք պոլսական թղթ-  
թակցութիւն մը, որուն մէջ  
սոյն սպանութեան մանրամաս-  
նութիւններն ալ կը գտնուին:

— Հակաինչխանական դեսպա-  
նախորհուրդը իր նիստերը փա-  
կեց անցեալ շորեքշաբթի օր:  
Պատուիրակները պատուոյ խօսք  
տուին որոշումները գաղտնի պա-  
հելու:

— Բեթերսպուրկի պատկերա-  
զարդ Հանդէս մը, հրատարա-  
կած է երկու պատկերներ, ու-  
րոնք որբերով շրջապատուած  
երկու տարաբախտ հայ մայ-  
րեր կը ներկայացնեն: Յնցու-  
ալիներով ծածկուած այս անմեղ  
թշուառները, ցուրտէ և ան-  
սուաղութենէ տառապող իրենց  
դէմքերով, աշխարհին ամենէն  
սրտաճմրկ և ապստամբեցու-  
ցիչ տեսարանը կը պարզեն:

— Ահաւասիկ Սօֆիաի վիճակա-  
հանութեան մէջ շահող զխաւոր  
թիւերը:

Թիւ	4493	Ֆր.	30,000
"	5129	"	5,000
"	10395	"	3,000
"	47519	"	2,000
"	7566	"	1,000
404, 16,488, 18,157, 28,937,			
32,473 թիւերը 100կան ֆրանք:			
7,582, 8,956, 15,403, 29,555,			
29,488, 30,448, 33,346, 34,909,			
37,844, 39,792 թիւերը՝ 200ա-			
կան ֆրանք:			

Առեւտրական լրագիրը կը գրէ  
թէ մեծագոյն պարգեւը շահուած  
եւրոպական դրամատունէ մը:

ԽՄԱՍԻՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»-Ի  
Կը ապագրուին ամէն լեզուէ  
այցեատուն, հասցեատուն, նամա-  
կագրուի, հարսանեկան հրաւի-  
րագիր, մահապաղ, ինչպէս նաև  
պրօշիւններ:

Գիններն յոյժ զիւրամատչելի:  
Ուրիշ քաղաքներէ եկած  
յանձնարարութիւններ ճշգու-  
թեամբ և փութով կը կատար-  
ուին:

—)(—

ՏՕՔԹ. Բ. ԵԱԶՍԱԶԵԱՆ

Կը գարմանէ ներքին և ծնըն-  
դական գործարաններու ամէն  
տեսակ հիւանդութիւններ, ինչ-  
պէս նաև վեներական ախ-  
տեր:

Հիւանդ կընդունի իր փոր-  
ման տան մէջ, ամէն առա-  
ւօտ ժամը 9—10, և իրիկուննե-  
րը 2—5. Իսկ կէս օրէն մինչեւ  
ժամը 2, կը գտնուի իր բնակա-  
րանը, Քիւչիւք խան փողոց,  
թիւ 5, Թիրիպէ:



ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ կուզէք հագնել կօշիկներ ու-  
րոնք իրենց վրայ միացունեն ձեւի  
և զիմացկունութեան կատարելու-  
թիւն և մանաւանդ գինի չափաւոր-  
ութիւն, առանց վարանելու դիմե-  
ցէք Ստեփան Խորասանճեանի, Մու-  
սալլա, բաղնիք փողոց, հաճի Հասան  
էֆէնախի օթէլին տակ. հաւատացէք  
որ առիթէն պիտի օգտուիք:

ՏՊԱՐԱՆ  
ԱՐԵՒԵԼԵԱՆ  
Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ  
Վ.Ս.ՈՒՆՍ.  
Սելադ քաղ. Շիքէխաֆ փողոց.  
Ստալլը 2:օտէի կից.  
Կը ապագրուին հայերէն, պուլկարե-  
րէն, գաղղերէն, յունարէն, տաճկերէն,  
և այլ լեզուներով այցեատուն, հասցե-  
ատուն, հարսանեկան հրաւրագիր, ազ-  
գարարութիւն, նամակագրուի, պահա-  
րան, մահապաղ, վաճառականական ամէն  
տեսակ գործեր, գիրք, լրագիր, և այլն:  
Գումար եւ ոսկեգօծ զարդագործե-  
րու համար ամէն լեզուէ նոյն տան եւ  
մասնաւոր գործիքներ կը գտնուին:  
ՄԵՏ ԽԱՄԻ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ  
ԳԻՆԵՐԸ 808Ժ ԴԻՐԱՄԱՏԵԼԻ  
Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւն-  
ներ ճշգուրտ և փութով կը կատար-  
ուին:

ՎՄՐԿՈ  
ԵՐԿՈՒ ՍԷՐ  
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻԹ)  
(Գին 1 Թրանգ)  
Մնացած սակաւաթիւ օրինակները  
կը ծախուին Վառնաի մէջ Շարժումի  
խմբագրատունը, Թիրիպէ Տ. Անճոն  
կոչի մօտ, Ռուսոյք՝ Հայկ Մալախ-  
եանի սրճարանը:  
ОТГОВОРНИКЪ: А. СУКЯСОВЪ.  
Печанница „Взаимность“ Варна.